

## Վ Ե Ն Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ն Ո Ւ Է Ր Ն Ե Ր

Ն. Վ. Իտալիոյ Թագուհին Հեղինէ անցեալ սեպտեմբերին վանքիս շնորհած այցելութեան յիշատակը փափագեցաւ յաւերժացնել արքայական նուէրներով, սպառուզելով հետեւիլ իր նախորդին՝ Մարգարիտայի։ Նուէրները երկու էին։ Նախ զոչ մը պղնձէ գեղեցիկ կաննեղներ, որպէս զի կախուին ի յիշատակ իրեն՝ եկեղեցւոյ աւագ խորանին երկու կողմերը։ Իսկ քանի մը օր վերջ ալ Ս. Ղազար կը հասներ Հեղինէ Թագուհիին կողմէ դրուած միւս նուէրը, այն է իր Վեհափառ Անուանոյ՝ Թագաւորին աշխատասիրած բազմահատոր եւ իրապէս կոթող գործը, որ կ'ամփոփէ իր մէջ Իտալիոյ կին եւ նոր բոլոր դրամներուն ցանկը, նկարագրութիւնն եւ դրամներու լուսարտիւնըրը. Corpus nummorum italicorum: Այս գործէն ցարդ տպագրուած են մեծադիր եւ բազմիչեայ ստանդէկ հաստոյներ, վերջինը անցեայ տարի լոյս տեսած, եւ յաջորդներն եւս պիտի շարունակուին կարգաւ հրատարակուիլ։

Կարեւոր եւ յոգնավատակ գործ մը եւ առաջին փորձն է, ինչպէս կ'ըսուի հատորներուն ճակտին վրայ, ընդհանուր ցուցակագրութեան միջնադարեան եւ արդի դրամներուն, որ Իտալիա դրոշմուած են կամ ուրիշ երկիրներ ալ, բայց իտալացիներու կողմէ։ Գուցակագրումը կատարելու իբր կիմ ծառայած են Ն. Վ. Թագաւորին դրամներու անձնական, ինչպէս նաեւ Թովնոյի արքայական Հաւաքածոները։ Այն դրամները որ կը պակսէին այս երկու Հաւաքածոներու մէջ, բայց կը գտնուէին այլուր եւ ուրիշ ժողովածոներու մէջ, անոնք ալ նշանակուած են, նկարագրուած եւ առանձին ցանկի մը մէջ սակոփուած։ Իսկ հեղինակներու քով նկարագրուած դրամներէն, որ կը պակսէին այդ հաւաքածոներուն մէջ, սոյն գործին մէջ նկարագրուած

են անոնք միայն՝ որ կիմ կազմող հաւաքածոյին մէջ չեն գտնուիր։

Ցուցակագրումը եղած է այն կարգաւ որ ընդունուած է Ն. Վ. Վեհափառութեան Հաւաքածոյին մէջ, այսինքն գաւառներու կարգաւ (regionale), իսկ իւրաքանչիւր գաւառին համար ալ հետեւած է սյուրբհնական կարգին այն փողերանոցներուն եւ կամ վայրերուն՝ որոնց անունով դրամները դրոշմուած են. իսկ թուական կրող դրամներու ցանկումը ժամանակագրական կարգաւ եղած է։

Սոյն ցուցակը կրնայ ամենակատարեալ ըսուիլ, վասն զի ծանօթ դրամներէն գրեթէ ոչ մին կը պակսի մէջը. մանաւանդ որ հրատարակութեան ընթացքին տպագրական թերեթերը դրուած են խալ կամ օտար պետական եւ անձնական կարեւոր հաւաքածոներու տէրերու, որպէս զի եթէ մէջը կան պակասներ կամ դեռ ուրիշ զանազանակներ կը գտնուին, նշանակուին եւ հարկաւոր տեղեկութիւնները դրուին հրատարակողին. բարեբախտաբար օր. առաջին հատորին համար շատ նուագ պակասներ գտնուեցան։

Իւրաքանչիւր հատորին վերջը առանձին զետեղուած են լուսարտիւնները այն դրամներուն, որ առանձնայատուկ տիպար մը կը ներկայացնեն եւ կամ կարեւոր զանազանակ մը ընդհանուր տիպարէն։

Սոյն պերճ նուէրներով, մանաւանդ երկրորդով, որ ցարդ ոչ մէկ անձի կամ ընկերային հաստատութեան մը կատարուած էր Հեղինակին իսկ՝ Թագաւորին որոշ մէկ փափագին համաձայն, Ն. Վ. Թագուհին ցոյց տուաւ մի անգամ եւս իր ջերմ եւ անկեղծ վերաբերումը, համակրանքն եւ սէրը հանդէպ Միաբանութեանս։

ԽՍՐ.

